ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Շարունակական կրթության համակարգի զարգացման՝ որպես աշխատաշուկայի հավասարակշռության ապահովման մեխանիզմի ռազմավարական խնդիրները»** թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Անահիտ Մելքումյան**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Աշխատանքի շուկան խիստ զգայուն է և արագորեն արձագանքում է ամբողջական պահանջարկի կտրուկ փոփոխություններին, որոնք, տարբեր գործոններով պայմանավորված, վերջին ժամանակներում ավելի զգալի են դարձել: Արդյունքում փոխվում է աշխատուժի հմտությունների, մասնագիտական պատրաստվածության նկատմամբ գործատուների պահանջը, որի բավարարման նպատակով անհրաժեշտություն է առաջացել զարգացնել շարունակական կրթության համակարգը: Սակայն այն հետխորհրդային երկրներում դեռևս զարգացման սկզբնական փուլում է և գտնվում է բարեփոխումների ակտիվ գործընթացում, ուստի կառուցողական աջակցության կարիք ունի: Սույն հետազոտության շրջանակում նպատակադրվել է կատարել գործող շարունակական կրթության համակարգի առկա կառուցակարգերի արդյունավետության գնահատում և աշխատանքի շուկայի հիմնախնդիրների լուծմանն առավելագույնս բավարելու նպատակով դրանց բարելավման ուղիների առաջադրում: Դրված նպատակին հասնելու համար կկատարվի շարունակական կրթության ոլորտի մանրակրկիտ ուսումնասիրություն, հիմնախնդիրների բացա-այտում, կառաջադրվեն շարունակական կրթության համակարգի զարգացման կառուցակարգերի արդյունավետության բարձրացման ուղիներ և կգնահատվեն վերջինիս միջոցով աշխատաշուկայի անհավասարակշռության կրճատման հնարավորությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Շարունակական կրթության համակարգի զարգացման՝ որպես աշխատաշուկայի հավասարակշռության ապահովման մեխանիզմի ռազմավարական խնդիրները»** ("Strategic Aspects of the Development of the System of Continuing Education as a Mechanism for Ensuring a Balanced Labor Market", "Стратегические аспекты развития системы непрерывного образования как механизма обеспечения сбалансированности рынка труда") **թեմայով** (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Անահիտ Մելքումյան**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս **Մելանյա Ղարագյոզյան**, ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Լուսինե Կարապետյան**, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, ասպիրանտ **Աստղիկ Հովհաննիսյան**, հայցվող ընդհանուր գումարը՝ 10134,0 հազար դրամ) **համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող

գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Մուլտիկուլտուրալիզմի քաղաքականության հիման վրա զբոսաշրջային կլաստերի ձևավորման մեթոդաբանության մշակում»** թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մարիա Սահակյան**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Զբոսաշրջային ակտիվ գործունեության մեջ ներգրավված երկրների և շրջանների տնտեսությունների կայուն զարգացումն ապահովելու, բազմազան մշակույթների ներկայացուցիչների համար հանդուրժողա-կանության խթանման, ինչպես նաև նրանց միջև զբոսաշրջային փոխանակման ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել մուլտիկուլտուրալիզմի (բազմամշակութայնության) գործոնի ազդեցությունը: Ծրագրի նպատակը զբոսաշրջային կլաստերի ձևավորման մեթոդաբանության մշակումն է, որը հիմնված է բազմամշակութայնության քաղաքականության իրականացման վրա: Ծրագրի իրականացման արդյունքում կմշակվի նոր ինտեգրալ ցուցանիշ՝ «տարածաշրջանի զբոսաշրջային գրավչության ինդեքսը (Itar), որը կարող է օգտագործվել զբոսաշրջային դեստինացիաների զարգացման գործընթացների արդյունավետության մակարդակը գնահատելու համար: Նախագծում առաջ քաշված հիմնախնդիրների լուծումների նորույթը ավանդական տարածքային-աշխարհագրական և սոցիալ-տնտեսական գործոնների հետ մեկտեղ զբոսաշրջային դեստինացիաների գոտևորման գործընթացներում մուլտիկուլտուրալիզմի գործոնի ազդեցությունն է, ինչի արդյունքում հնարավոր կլինի մշակել բազմամշակութային գոտևորման տեսական մոդել, ինչպես նաև զբոսաշրջային կլաստերի ձևավորման համապարփակ մեթոդաբանություն՝ հաշվի առնելով ժամանակակից զբոսաշրջային արդյունաբերության զարգացման առանձնահատկությունները բազմամշակութայնության քաղաքականության իրականացման հիման վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Մուլտիկուլտուրալիզմի քաղաքականության հիման վրա զբոսաշրջային կլաստերի ձևավորման մեթոդաբանության մշակում»** ("Development of a Methodology for the Formation of Tourist Clusters Based on

the Policy of Multiculturalism", "Разработка методологии формирования туристских кластеров на основе политики мультикультурализма") **թեմայով** (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մարիա Սահակյան**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու **Գայանե Թովմասյան**, Հայ-ռուսական համալսարանի մագիստրանտ **Վարդիշաղ Սահակյան**, հայցվող ընդհանուր գումարը՝ 7527,0 հազար դրամ) **համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6

Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«ԵԱՏՄ տնտեսության արդի ինստիտուցիոնալ համակարգի և ԵԱՏՄ անդամ երկրների բնակչության կենսամակարդակի բարձրացման հնարավոր ուղիների վերլուծություն»** թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր **Ֆիրուզա Մայիլյան**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Եվրասիական տնտեսական միության հիմնական նպատակներից է անդամ-երկրների տնտեսությունների համակողմանի արդիականացման, մրցունակության բարձրացման, կայուն տնտեսական աճի և զարգացման

համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ նախապայմանների ստեղծումը և ապահովումը՝ ԵԱՏՄ անդամ-երկրների բնակչության կյանքի որակի բարձրացման ակնկալիքով: Ինտեգրացիոն գործընթացների զարգացման արդի փուլում անհրաժեշտ է վերլուծել և քանակապես գնահատել նշված գործոնների ազդեցության աստիճանը ԵԱՏՄ անդամ-երկրների բնակչության կյանքի որակի վրա և նախանշել ինտեգրման հիմնական ուղղությունների կատարելագործման հնարավոր ուղիներն ու մեխանիզմները: Ծրագրի նպատակն է մշակել ԵԱՏՄ անդամ երկրների կյանքի որակի գնահատման նոր ցուցանիշ, մշակել կյանքի որակի կարգավորումն ապահովող օրենսդրական և ինստիտուցիոնալ մեխանիզմների փոփոխությունների առաջարկություններ, իրականացնել կյանքի որակի ցուցանիշի վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության քանակական գնահատում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից տարածաշրջանային զարգացման ծրագրերի մշակման, ԵԱՏՄ ինստիտուցիոնալ հենքերի կատարելագործման, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների առանձին գերատեսչական մարմինների կողմից ռազմավարական ծրագրերի մշակման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«ԵԱՏՄ տնտեսության արդի ինստիտուցիոնալ համակարգի և ԵԱՏՄ անդամ երկրների բնակչության կենսամակարդակի բարձրացման հնարավոր ուղիների վերլուծություն»** ("Analysis of the Modern Institutional System of the EEU Economy and the Possible Ways of Raising the Living Standards of the EEU Member States' Population", "Анализ актуальной институциональной системы в экономике ЕАЭС и возможных способов повышения жизненного уровня населения государств-членов ЕАЭС") **թեմայով** (ղեկավար՝ ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր **Ֆիրուզա Մայիլյան,** թիմի անդամներ՝ ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ, կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մանուկ Մովսիսյան**, ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Նարինե Խալաթյան**, ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ **Մարիամ Կոտոյան**, հայցվող ընդհանուր գումարը, հազար դրամ՝ 10364,0) **համատեղ մրցույթի**

հայտը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Տնտեսական անվտանգությունը՝ որպես տնտեսության կայուն աճի ապահովման երաշխիք»** թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մկրտչյան**) մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Պետության, որպես շուկայական հարաբերությունների մասնակցի, կարևորագույն գործառույթը տնտեսական կայուն աճին ուղղված որոշումների կայացումն է՝ ռիսկի և անորոշության պայմաններում: Պետական կառույցների կողմից տնտեսական անվտանգության ռազմավարություն ստեղծելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն դիտարկել այն գործոնները, որոնք կարող են ազդել կայուն տնտեսական աճի վրա: Երկրի տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդրի ամենակարևոր կողմը նրա մակարդակի գնահատման չափանիշների ընտրությունն է, ինչպես նաև յուրաքանչյուր չափանիշի համար արժեքների բազային հաշվարկը: Ուսումնասիրության ակնկալվող արդյունքներն են. 1. «Տնտեսական անվտանգություն» հասկացության սահմանման հստակեցում, որն իր մեջ պարունակում է «կլաստերացման» եւ «ռեսուրսների ներուժ» գաղափարները: 2. Կլաստերացման գործընթացների և ռեսուրսների ներուժի գնահատման ինդեքսային մոտեցման մշակում: 3. Տնտեսական

անվտանգության մոնիտորինգ, որը պետք է հնարավորություն տա ապահովել կայուն տնտեսական աճ. 4. Տնտեսական անվտանգության ապահովման մեխանիզմի մշակում, որը տարբերվում է մատրիցային մոդելի ձեւավորմամբ: 5. Երկրի տնտեսական անվտանգության վրա ազդող գործոնների գնահատում կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծության մեթոդների հիման վրա: 6.Տնտեսական անվտանգության ամրապնդման ալգորիթմի մշակում, որը բնութագրում է նրա հիմնական փուլերն ու անհրաժեշտ գործողությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Տնտեսական անվտանգությունը՝ որպես տնտեսության կայուն աճի ապահովման երաշխիք»** ("Ensuring economic security as the basis for sustainable economic growth", "Обеспечение экономической безопасности как основа устойчивого роста экономики") թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մկրտչյան**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վադիմ Գրիգորյան**, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու **Արա Մկրտչյան**, ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Սիմոն Իսկաջյան**, հայցվող ընդհանուր գումարը՝ 11565,0 հազար դրամ) համատեղ մրցույթի հայտը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6

Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»

պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Բարձրագույն կրթության համակարգը թվային տնտեսության կայացման պայմաններում»** թեմայով (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, հաշվապահական հաշվառման և աուդիտ ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու **Մերի Բադալյան**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«Բարձրագույն կրթության համակարգը թվային տնտեսության կայացման պայմաններում»** ("Higher Education System in the Conditions of Digital Economy Formation", "Система высшего образования в условиях становления цифровой экономики") **թեմայով** (ղեկավար՝ ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, հաշվապահական հաշվառման և աուդիտ ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու **Մերի Բադալյան**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու **Աղավնի Հակոբյան**, ՀՊՏՀ «Մակրոտնտեսական վերլուծություն» մասնագիտության 1-ին կուրսի մագիստրանտ **Ավդա Միրումյան**) **համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն

ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6

Երևան